



DIVERCITY
Բազմազանություն

**«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ
“DiverCity” Social-Cultural, Human Rights Defender NGO**

**Գեղարքունիքի մարզ՝
Մարզպետ՝ Կարեն Սարգսյանին**
Հասցե՝ ՀՀ, ք. Գավառ, Գրիգոր Լուսավորչի 36

**«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ
Նախագահ՝ Արտակ Առաքելյանից**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարոբյան փողոց 34

14.12.2021

Հարգելի պարոն Սարգսյան,

«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ-ի ռազմավարական նպատակներից է ՀՀ օրենսդրական համակարգում առկա բացերն ու խնդիրները վեր հանելը՝ խտրականության դեպքերի շուրջ փաստահավաք գործունեություն ծավալելու միջոցով, որի շրջանակներում պլանավորված են իրականացնել իրավական ոլորտի մի շարք հետազոտություններ:

Այսպես, ներկայումս Կազմակերպության կողմից իրականացվում է «Նպաստել խտրականության նվազմանը Հայաստանում» ծրագիրը, որի նպատակն է վեր հանել նախազորակոչային և զորակոչային ժամանակահատվածում բժշկական հետազոտությունների ընթացքում թույլ տրված խտրականության դեպքերը, առաջարկել խնդրի լուծման ուղիներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հարցազրույցներ նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի ներկայացուցիչների, ինչպես նաև զինկոմիսարիատների և հոգեբուժական հաստատությունների ներկայացուցիչների շրջանում:

Առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով մարզպետարանի ներգրավվածությունն ու առնչությունը տարածքային /տեղական/ զինկոմիսարիատների զորակոչային հանձնաժողովներին, խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Արդյոք 2018թ. ամառայինից մինչև 2021թ. ամառային զորակոչերի շրջանակներում անձամբ ներգրավվել եք հանձնաժողովում՝ որպես հանձնաժողովի նախագահ:
2. Արդյոք 2018թ. ամառայինից մինչև 2021թ. ամառային զորակոչերի շրջանակներում ունեցել եք ներկայացուցիչներ տարածքային /տեղական/ զինկոմիսարիատների զորակոչային հանձնաժողովներում:
3. Երբևէ արձանագրել եք բռնության կամ խտրականության դեպքեր՝ զինակոչիկների նկատմամբ: Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն ընթացքի վերաբերյալ:



+37455793507
ngo.divercity@gmail.com
divercity.am

Սույն փաստաթուղթը կնքվել և
ստորագրվել է թվային
տարբերակով
«Բազմազանություն» սոցիալ-
մշակութային,
իրավապաշտպան ՀԿ-ի կողմից
14-ը դեկտեմբերի 2021թ.-ին:





DIVERCITY
Բարձրագույնություն

«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ “DiverCity” Social-Cultural, Human Rights Defender NGO

4. Երբևէ ստացել եք բողոքներ քաղաքացիներից՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի անձանցից, նրանց ներկայացուցիչներից, այլ շահագրգիռ անձանցից կամ կազմակերպություններից, զորակոչիկի նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքի մասին: Եթե այո, ապա ինչ ընթացք է տրվել բողոքին:
5. Խնդրում ենք նշել մարզպետարանի/մարզպետի պարտավորությունների շրջանակը նախազորակոչային և զորակոչային ժամանակահատվածում՝ դրանք կարգավորող իրավական ակտերի հղումներով:

Խնդրում ենք սույն հարցմանը պատասխանել գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ ենք:

Հարգանքով՝ Արտակ Առաքելյան



+37455793507
ngo.divercity@gmail.com
divercity.am

Սույն փաստաթուղթը կնքվել և
ստորագրվել է թվային
տարբերակով
«Բազմազանություն» սոցիալ-
մշակութային,
իրավապաշտպան ՀԿ-ի կողմից
14-ը դեկտեմբերի 2021թ.-ին:

